

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ ՀԱՅՈՅ ԳԹԱԿԱՎՆՈՒԹԵԱԼՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ*)

Ապագայի յոյսը մեծ է, բայց շարունակ յուսալ միայն և ոչինչ չստանալ, այլ միշտ տեսնել նոյն չարիքը՝ հնարաւոր չէ։ Չափազանց մեծ կենսունակութիւն է հարկաւոր անվերջ յուսալու և միայն յուսալու համար։ Մէկ օր պէտք է ապագայի անորոշութեան առաջ ծնուի կասկածը, որ դնալով պիտի գօրանայ։

Այս կասկածը Յովհաննիսեանի մէջ հենց սկզբից յաձախ կայ, երբեմն թեթև, բայց երբեմն էլ այնպէս զօրեղ, որ դառնացնում է նրան, և նա չի կարողանում նոյն իսկ «ծաղկավառ գարունը», սէրը վայելել։

. . . Ո՞վ պիտէ յետոյ

Իմ տանջուած հոգին ինչ նոր նոր ցաւեր

Դեռ պիտի տեսնէ, ծաղիկը սիրոյ

Որ հիմա թօշնած մի հիւանդ ժապով

Դեռ նայում է ինձ, արդեօք բնաւին

Պիտի չը մեռնի . . . գուցէ և շուտով

Լուս փրթորիկը ճայթի իմ գլխին։

Լուզորդի նման ես ծովս եմ ընկնում—

Արդեօք միւս ափն ինձ պիտի հանեն

Գոռ ալիքները . . .

Դժբախտաբար, ինչպէս ոչ ոք, նոյնպէս և մեր բանաստեղծը «միւս ափը» չի ելում. և բնականաբար կասկածն ապագայի համար՝ մտնելով ներս պիտի կրծէր նրա սիրալը։ Դեռ 19 տարեկան հասակում, երբ թւում է թէ տանջուելու տեղիք չպիտի ունենար, նրան, տեսանք, վախեցնում է ծերութիւնը։ Այսպէս է միշտ. մեծ վայելչութեան ու գեղեցկութեան սիրահարները սոսկում են ծերութեան առաջ, որ ինքը սառնութիւնն է և կեանքի տղեղութիւնը։ Բայց ծերութեան ետևից գալիս է մահը, և մեր բանաստեղծը զես երիտասարդ հասակում սիրոյ համբոյրի

*) Տես «Արարատ», Ապրիլ. 547.

մէջ մահն է զգում (երկու համբոյր), ամենամեծ աններ-
դաշնակութիւնն ու տգեղութիւնը որ կայ աշխարհի վրայ:

Ո՞չ . . . ողջ մեր կեանքն է վաղանցիկ,
Աղջը լոկ ծաղը է անսիրտ բնութեան.
Եւ ուր, և հրճուանք, համայն զեղեցիկ
Զոհ է աւերի և մոռացութեան:

Աւերւում, անցնում է և խրոխա մեծագործութիւն,
և փառք, և մեծաշուք կեանք . . . Մարդը սոսկալի վիճակի
մէջ է, նա խաղալիք է բախտի.

. . . Մի է բոլորիս վախճան
Անվիրջ երազով ապրիլ և յուսալ
Միայն մի թիզ հող վերջին հանգստեան:

Դառնագին յուսահատութեան, մարդկային ընդհանուր
թշուառութեան մի հառաշանք, որ ինքնաբուխ է, վշտա-
հար, խորը մելամաղձոտ, և որի բնական հետեանքը պիտի
լինէր անէծք կեանքին.

Լինում է բոպէ, ևս անիծում եմ
Եւ իմ վիճակը և ամբողջ աշխարհ,
Երջանիկ մի օր, ևս մտածում եմ,
Բախտը չի բանայ երբեք ինձ համար:

Այս նախագացումն, որ ունի նա դեռ երիտասարդ
ժամանակ, իրականանում է կեանքի մէջ: Վերջի վերջոյ
նա կորցնում է հին ցնորքների հաւատը, և ստեղծում է
մի ցաւագար վիճակ, որ յաճախ երգել է բանաստեղծը:
Առնենք օրինակ նրա «Կար մի ժամանակ, երազում էի»
եղերերդը. նրան այլ ևս ոչինչ ու ոչինչ չի զրաւում. նա
յուսախար է և կատարելապէս յուսահատուած է կեանքից,
որովհետեւ եթէ մի ժամանակ երազել է, թէ մի օր անդուկ
աշխատանքով հանդիսա պիտի գտնի, նրան մնացել է այժմ
միայն իր այդ հանգստին փափազած լինելը տանջուած,
վշտարեկ:

. . . Զկայ վայելքի
Նախկին բոցավառ անուշ ցանկութիւն,
Զկայ սրտառուշ հրապոյրը ցնորքի . . .
Միրտս դատարկ է. ոչ կեանքի հոգսեր,

Ոչ աշխատութիւն չեն կարող ինձ տալ

Այս իմ կորուսած ոսկի երազներ,

Մատաղ օրերիս սիրուն իդէալ:

Եւ կեանքը ահա մի վայրի անտառ,

Ուր ևս մոլորուած քայլերս եմ ուղղում,

Առանց տեսնելու մի նշոյլ պայծառ,

Ուր միայնութիւնս եմ միայն ողբում:

Իրեկ նաւորդ ալեաց երեսին

Գնում եմ անյոյս, վշտերից ընկճուած . . .

Եւ պիտի համեմմ մի օր փարոսին,

Կեանքի կատաղի հոսանքից փրկուած:

Սոսկալի է այսպիսի կեանքը մի մարդու համար, որ
տենչանք ունի վայելչութեան ու գեղեցիկի: Երիտասարդ
հասակում գարձեալ գեռ մի երկբայական յոյս ունէր պայ-
ծառ ապագայի համար. բայց այժմ այլ ևս ոչ մի յոյս: Եւ
նա ցաւի ահազին բեռն ուսերին տանջւում է:

* * *

Բայց կարելի է արդեօք ապրել այսպէս գատարկ ու
աւեր սրտով. դա մի սարսափելի վիճակ է, որի մէջ կեանքը
կորցնում է իւր բոլոր գրաւչութիւնը, որ և հաւասար է
մահուան: Եթէ նին իդեալներն ու երազները մեռած են,
և եթէ մարդ ապրում է, բնականաբար պիտի ձգտի դար-
ձեալ նոր իդեալներ ստեղծելու:

Թէպէտ խեղդուած եմ ևս գաժան վշտից
Եւ սիրտս մաշուած անմիտ յոյսերով . . .

Բայց դու մի յիշեր իմ դառն վիճակ,

Խարիր ինձ դարձեալ շքեղ ցնորժով . . .

Եւ բարեբախտաբար մեր բանաստեղծի այս դառնա-
գին յուսահատ շրջանն անցնում է, և նա մխիթարութիւն է
գտնում նոր ձգտումների մէջ, ձիշտ ասած, իր աշխար-
հայեացքի ընդլայնման մէջ: Դա տանում է նրան արդէն
դէպի փիլիսոփայական բանաստեղծութիւնը:

Նա փորձում է կեանքի առեղծուածը լուծել: «Ինչո՞ւ
ապրեցայ, ինչո՞ւ եմ ապրում» հարցերը նա վաղուց տուել է,
և դրանց պատասխանը տալ դժուարացել նման հոգեկան
մի վիճակում (Անպտուղ կեանքիս . . .), երբ գիտութիւնը

կորցրել էր նրա հաւատքը, միաքը դարձրել էր կասկածոտ և սրտում ջերմ հաւատքի տեղ բռնում էր դատարկութիւն ու ցուրտ ձմեռ։ Բայց այն ժամանակ գոնէ զիտութիւնն ինքը մի զաղանի սփոփիչ զօրութիւն ունէր իր մէջ, և բանաստեղծը նոր ցնորքների անձնատուր էր եղած, անդուլ վաստակով, աղնիւ կրքերով չարը մէջ տեղից վերացնելու։ Իսկ այժմ հին ցնորքը մեռել է, և զիտութիւնն էլ բաւականութիւն չի տալիս նրան, և կեանքի առեղծուածը կանգնած է նորից նրա առաջ որպէս մի խաւար գիշեր։

Այս անմիտ կեանքի խորհուրդն անմեկին
ինձ համար դարձեալ զիշեր է խաւար։
Թէ մի հրէշ է դա առասպելական
Մհեղ ու զրաւիչ, այլ անպատասխան—
Որպէս մի Սիրէն կախարդում է մեղ
Եւ թունաւորում մի նենդ օձի պէս . . .

Եթէ կեանքը մի պառապագին ցնորք է, այս տանձագին վիճակը յոռետեսի համար բնականաբար մի ելք պիտի ունենար. «մարդս ենջանկութեան կարող է հասնել միայն մերկանալով իր երկրաւոր անձնաւորութիւնը և մտնելով ոչնչացման մէջ», — ահա ամենամեծ մխիթարութիւնն ու սփոփանքը. դա չարիքի վերջն է.

Զգիտեմ ինչն, երբ տեսնում եմ ևս
Ինչպէս սաստկանում, աճում է չարիք . . .
Ես մտածում եմ, որ այս չարիքն էլ
Պիտի չմնայ անվերջ, անվախճան.
Թէ չար, թէ բարի, խիսդ թէ վիշտ անել՝
Կանցնեն զերդ երազ, ինչպէս ամեն բան . . .

Ի՞նչ է այս շարիքի վերջը, արդեօք բացարձակ ոչնչութիւն, անէացնում, որի մէջ ոչ բարի կայ, ոչ չար— Այսպիսի մի յոռետեսութեան չէր կարող յանդել մի բանաստեղծ, որ այնքան իդէալիստ էր, վեղեցկի մեծ փափագ ունէր և անմահութիւն ու վայելչութիւն էր տենչում բուռն անձկութեամբ։ Այս գիծը մեր բանաստեղծի մէջ մնում է մինչև վերջն էլ, և բնականաբար նա պիտի հասնէր անէ-

v
J

ացման մի ուրիշ ըմբռնման, այն է՝ մարդս երջանիկ է լինում, երբ թօթափելով իր երկրաւորը՝ միանում է տիեզերական ոգուն՝ յաւիտեան կենդանի, յաւետեան գեղեցիկ և բարի քնութեանը։ Յովհաննիսեանն այս եզրակացութեան հասնում է «Աշուն» բանաստեղծութեան մէջ։ Այստեղ մի ըսպէ անցաւոր մարդը ցաւով նախանձում է բնութեան անմանութեանը. բայց իսկոյն կեանքի առեղծուածն արդէն լուծուած է. անցաւոր մարդս յաւիտենական մայր բնութեան զաւակն է և իր մահով միանում է բնութեանը և նրա մէջ գտնում իր հանգիստը. նա հաղորդակից է լինում բնութեան «վսեմ խորհրդին»։ մահն այլ ես չարիք չէ, այլ անմահութեան և անմահ ներդաշնակութեան հաղորդակցութիւն։

Քո ծոցն եմ ձգտում, ով մայր բնութիւն,
Կամիմ հաղորդուիլ քո լուս հանգստեան
Վսեմ խորհրդին . . .

Զգում եմ բերկրած, զարունդ յիշելով,
Որ այդ ցնորք չէ, կայ անմահութիւն . . .
Եւ դիրկդ եմ ընկնում, հոգիս անխոռվ,
Քեզ կամիմ միանալ, ով մայր բնութիւն։

* * *

Սրանից յետոյ էլ արդեօք պիտի տանջուի բանաստեղծը, թէ նա գտել է իր փափագած վայելչութիւնն ու հանգիստը։ Ես կարծում եմ, որ վերջինն է. և եթէ բանաստեղծը հին ձեր երգեր էլ յօրինելու լինի, դա միայն կըրկնութիւն կը լինի նախորդների։ Ես կարծում եմ, որ նա իր զարգացման ծայրն է հասել և իր բանաստեղծութիւնն, աւելի աղնուացրած և աւելի խորացրած, այստեղ է վերջացնում, որաեղից սկսել էր — վայելչութիւնը, որ երազել է նա դեռ քսանամեայ հասակում ի միջի այլոց «Ա՛խ, տուեք ինձ մի քաղցր քուն, կեանքից հեռու ոլանամ» զմայլելի բանաստեղծութեան մէջ։ Համեմատենք այս բանաստեղծութեան հետ նրա վերջին երգը, որ տպուած է սոյն թուի «Սրաբատի» յունուարի համարում, և կը տեսնենք, որ այն, ինչ որ երազում էր երիտասարդ հասա-

կում, — հեռանալ կեանքից «այն աշխարհը,ուր խնդութիւն,
ուր սէրն է միշտ անթառամ», գեղեցիկ բնութեան խաղաղ
ծոցին ապրել հեշտագին, — արդէն գտել է բանաստեղծը:
Նա արդէն հեռու է, կտրուած է աշխարհից, մենակ է,
բայց այդ մենակութիւնն եթէ առաջ տանջանք կը պատ-
ճառէր, այժմ երջանկութիւն է, նրա սիրտը լցնում է «մի
գերերկրային բերկութեամբ»: Նա այլ ևս ցաւակից ընկերի
կարիք չի զգում, որովհետեւ նրա սիրտը հանգիստ է, ա-
զատ է խոսվայոյց կրքերից: Ինչու, — որովհետեւ նա գտել է
կեանքի գաղտնիքը, ունի հին տենչերի փոխանակ նոր
տենչեր, որ է միանալ մայր բնութեանը, ամենի սկզբին
ու վախճանին:

Ո՞հ, ի՞նչ անպատում հոգեզմայլութեամբ
երազում եմ ես, այսպէս միայնակ,
իրեւ երկնային մի մոլար ջինջ ամպ
Յնդել եթերքումն անհուն, կապուտակ . . .
Կամ սիրով արբախո, ինչպէս պատանին
Մատաղ սիրուհու գրկումը անուշ,
Գլուխըս դրած երկրի ջերմ կրծքին,
Իւր հետ յաւիտեան քուն լինել անյուշ . . .

Այժմ ամեն ի՞նչ գեղեցկութիւն է և ներդաշնակու-
թիւն, որովհետեւ բնութեան հետ է և բնութեան մէջ, ուր
չարիք ու տգեղութիւն չկայ. և բանաստեղծը կարող է
բացագանչել.

Եւ յաւիտեան վայելչութիւն
Գրկէ հոգիս, չյագենամ:

Այսպէս Յովհաննիսեանի եղերերգութեան մէջ գըտ-
նում ենք մի ամբողջական աշխարհայեցողութիւն, իդէա-
վստական յոռետեսութիւնը, որ վերջը տանում է ոչնչաց-
ման միանալով մայր բնութեան հետ: Կարելի է առել, թէ
հենց առաջին գրքով, 1887 թուի հրատարակութեան մէջ,
այս աշխարհայեացքն իր յոյզերով արդէն ամբողջացած է
եղել. յետագայում բանաստեղծը միայն աւելի խորացրել.
Ընդարձակել և պարզել է այդ և բանաստեղծութիւնն աւելի
զարգացրել է արուեստի կողմից:

Ենչու է այսպէս:

Շատ անգամ դրել և աւելի գանգատուել են, թէ Յովհաննիսեանը քիչ է արտագրում. բայց այսպէս ասողները պէտք է իմանան, որ եզերերգու բանաստեղծը, ինչպիսին է Յովհաննիսեանը, կարող է շատ շատ մի փոքրիկ հասոր միայն դրել. բովհետե նա ոչինչ չի յօրինում առանց անձնական գորեղ յոյզերի, իսկ սրանց թիւը չի կարող սահմանափակ չլինել: Եւ այն օրից, որ բանաստեղծն սկսում է զգալ իւր կոչումը, նա պատրաստ ունի իր մէջ իր յոյզերը, սկզբում յաճախ ի հարկէ տարտամ ու խուր, բայց հետզհետէ աւելի ու աւելի պայծառ: Այդ պատճառով նա առաջին տարիներում արգէն պէտք է երգէր իր այդ մի քանի յոյզերը և յետագայում միայն պարզէր նոյնը: Բայց շարունակ նոյնը երգել կարելի չէ, առանց կրկնութիւններ անելու: Եւ մեր բանաստեղծն արգէն իրօք բաւական կրկնութիւններ արել է: Այսուհետեւ, կարծում եմ, այլ ևս նորութիւն չպէտք է սպասել. այլ այն յմիայն, որ նա աւելի ուժգին թափով և աւելի սիրուն երգէ իր բանաստեղծութեան վերջին աստիճանը, անմահ ու գեղեցիկ բնութիւնը և նրա հետ միացած մարդու հանգիստը, վայելչութեան ու գեղեցկութեան ծարաւի յագուրդը:

* * *

Յովհաննիսեանը բովանդակութեամբ թարմացնելով, իսկապէս հիմք գնելով մեր արեելեան քնարերգութեանը՝ միանգամայն և աւելի ազնուացնում է ու ճաշակաւոր դարձնում նաև մեր քնարերգութեան ձեն ու լեզուն: Նա ոչ թէ Գամառ-Քաթիպայի լեզուի շարունակող է լինում, այլ Շահազիզի, և այս նախ այն պատճառով, որ Շահազիզի լեզուն աւելի քնարական է, բայց նաև այն պատճառով, որ երկար տարիներ նա Լազարեան Ճեմարանում աշակերտել է Շահազիզին: Դժբախտաբար նրա երկակայութիւնն այնպէս բուռն ու ընդարձակ չէ, որ շատ պատկերներ ու արտայայտութիւններ ստեղծէր. բայց նրա համեստ ու չափաւոր երկակայութիւնը որակով շատ համեմատ է իր ներքինին.

շարունակ խաղում է բնութեան այնպիսի տեսարանների վրայ, որոնք լուսագեղ են, նուըը ու հրապուրիչ: Գարունը ^V բնուում է ամենամեծ տեղը, որովհետեւ դա աւելի համապատասխան է նրա ներքին ձգտումին դէպի գեղեցկութիւնն ու ներդաշնակութիւնը: Այս վշտահար բանաստեղծը, կարելի է ասել, իր պատկերների, տեսարանների ու համեմատութիւնների ամենամեծ մասն առնում է գարնան փարթամ ծաղկած դրախտից, պայծառ լոյսից ու ոսկի արևից, զեփիւռից և իր շունչից ու բոյրից: Նա սիրում է ոսկի շողն ու ցողը առաւտեան, երբ արտոյան երկինք է սլանում անոյշ ճռուողիւնով: Սիրում է կանաչներ ու ծաղիկներ և առանձնապէս վարդը: Առաւօտեան լուսաշող տեսարանի մեղմութեան հետ նրան գրաւում է նաև գարնան սիրուն գիշերուայ խաղաղութիւնը, երբ լուսինն ու աստղերը մեզ ժպտում են», կամ երբ «խաղաղ քուն մտած հանգչում է բնութիւն քնքուշ երազով»:

. . . Արե, գարուն,
Եւ խնկարոյր ծաղիկներ,
Կարկաչանոս վտակ սիրուն,
Կանաչաղքեստ բլուրներ».

. . . Համբոյր և սէր,
Դէմքով հրեշտակ կոյս չքնաղ,
Վայելչութեան պայծառ ժամեր,
Քաղցը ժպիտ, կեանք մատաղ . . .

Ահա գրեթէ բոլոր նրա սիրած բաները, որ նա կըրկնում է բազմապան ձևերով, յաճախ շատ հրապուրիչ նկարողութիւն: Այս ամենը շատ համատասխան է նրա «շքեղ ցնորքին»: այն կողմը կայ սակայն նաև նրա «դաժան վիշտը». և հասկանալի է, որ նրա երեակայութեան մէջ գարնան լուսաւոր և մեղմ տեսարաններին պիտի հակազդուէր բնութեան տիսուր կողմը՝ ցուրտ ձմեռն իր ստոր քամիով, խաւար գիշերն իր սկ քօղով, փոթորիկն իր մոայլ ամպերով, տիսուր հառաջը՝ փոխանակ անոյշ գեղգեղանքի, ^V չորացած գաշտ ու աւերակ, ինձոռոտ ճակատը ծերունու . . . Բայց բանաստեղծն իր վիշտն արտայայտում է ոչ այնքան

բնութեան այս տխուր երկոյթներով, որքան իր սիրած գեղեցիկ ու զուարժ պատկերների բացասութեամբ:

Վատակը քերում արիւնոտ քարեր,
Թառամեցնում է ծաղկավառ գարուն:

Դողում է երկինք սըի շաշիւնից,
Մբնել են ոսկի արեւի օպեր . . .

Ուր չկայ ժպիտ մէկի երեսին,
Այնաեղ թօշնում է վարդը կոկոնում,
Չտեսած շողը ոսկի արեւու . . .

Այլ, ախ, ցրտերից խամբեցաւ գարուն,
Թօշնեցաւ սրտիս անուշ կոկոն վարդ,
Կապուած է և լուռ վտակ կարկաչուն:

Բայց զարթեցայ, և ոչ բուրմունք եղեմի,
Ոչ չերմութիւն, ոչ լոյս, ոչ երգ մայիսեան . . .
Չէ վայլում դէմքիս բախտաւոր ժպիտ . . .

Այսպիսի բացասական նկարագիրները բացատրւում են բանաստեղծի մտածութեան եղանակով. նախ՝ նա բնութիւնը գեղեցիկ է տեսնում. ապա՝ ինչքան էլ չարիքն ու տգեղութիւնն իշխում են աշխարհում, բայց և այնպէս նա հաւատացած է գեղեցկութեան յաղթանակին և երեակայութեան մէջ միշտ գեղեցկութիւնն ունի. ուստի առաջ գեղեցիկն է մտածում, յետոյ տգեղն իրքն գեղեցկի բացասութիւն:

Զգիտեմ ինչու, երբ մասախլապատ
Կախուած է երկինք, և սրտիս վերան
Վիշտ է ծանրանում, և մինչ յուսահատ
Տեսնում եմ մրրիկ ցրտաշունչ ձմրան,—
Ես երազում եմ մի չքնաղ գարուն,
Ոսկի արեւով և ջերմ պայծառ,
Կանաչ դաշտորայք, լեռներ զարդարուն,
Վտակն առաջիս վճիտ ու կայտառ:

Ասել չի ուզիլ, որ այսպիսի մտածութեամբ բնութիւնը շատ նեղանում է բանաստեղծի աչքին, և նրա երեակայութիւնը շատ աղքատանում է: Դրանից է առաջանում նաև պատկերների ու արտայայտութիւնների այն միակերպու-

թիւնն ու կրկնութիւնը, որ կայ Յովհաննիսեանի քանաստեղծութիւնների մէջ:

Քանաստեղծի ոգու և երեսակայութեան նոյն յատկութեամբ է բացատրւում նաև նրա ոտանաւորների յօրինուածքը: Երբեմն նրա մտքում ծնւում է բնութեան գեղեցիկ ու զուարժ տեսարանը, բայց իսկոյն նրա ոգու զուարժութիւնն ու վայելչութիւնը խանգարւում է յոռետեսական հայեացքով. Երբեմն, ընդհակառակն, դժբախտ ու տխուր վիճակի մէջ երազում է ապագայ գեղեցկութիւնն ու վայելչութիւնը, որով ոտանաւորի մի մասը միւս մասի հակագրութիւնն է դառնում. Երբեմն էլ գեղեցիկն ու տգեղը, ուրախն ու տխուրը, ինչպէս լոյսի և ստուերի խաղեր, փոխէ փոխ յաջորդում են իրար ոտանաւորի ամբողջութեան մէջ, որով բանաստեղծութիւնը դառնում է հարազրութիւնների մի գեղեցիկ շարք:

Մտածելու եղանակի այս միակերպութիւնն ու երեսակայութեան ազգատութիւնը բարեբախտաբար շատ զգալի չեն լինում նրանով, որ Յովհաննիսեանը մեր բանաստեղծների մէջ ամենից արուեստաւոր դրողն է: Նա իշխում է լեզուին ու իր նիւթին և զիտէ ուզած ձևով այնպէս բանեցնել, զասաւորել այն, որ ոտանաւորը դառնում է ձկուն, նուրբ, ազնիւ ու ներդաշնակ և համապատասխան իր հիմնական արամագրութեանը: Այս վարպետութեամբ է բացատրւում և այն, որ այս արուեստաւոր գրողը, որի ոտանաւորները մեր հասարակ ընթերցողի ճաշակի համար չեն, զիտէ մեծ հարազատութեամբ ու հմտութեամբ նմանել երբեմն ժողովրդականին և պարզ ու անպանոյն ձևով, բայց շատ զօրեղ ու ազգու, արտայայտել իր և մեր ամենիս թախիծն ու վիշտը:

Մ. Սքեղեան